

10. Եգիպտական մամլուքների կողմից կաթողիկոսանիստ Հռոմկյա ամրոցը գրավվելուց հետո _____ թագավորը որոշեց հայրապետական աթոռը տեղափոխել մայրաքաղաք Սիս:

(1 միավոր)

11. 481 – 484 թթ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական մարտերին մասնակցում էր նաև Հայոց կաթողիկոս _____, որը մարտերից մեկում նույնիսկ վիրավորվում է:

(1 միավոր)

12. Հիսուս Քրիստոս բազմիցս երևաց աշակերտներին և _____ լեռան վրա օրհնելով նրանց՝ պատվիրեց գնալ և տարբեր ազգերի մեջ տարածել Իր պատգամները:

(1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից
13. Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը.

(1 միավոր)

- 1) Վարդան Արևելցի
- 2) Թովմա Մեծոփեցի
- 3) Մատթեոս Ուռնհայեցի
- 4) Կիրակոս Գանձակեցի
- 5) Ստեփանոս Օրբելյան

- ա) Ժամանակագրություն
- բ) Աղվանից պատմություն
- գ) Սուրբ Կաթողիկեի ողբը
- դ) Տիեզերական պատմություն
- ե) Հիշատակարան
- զ) Հայոց պատմություն

1	
2	
3	
4	
5	

14. Հասկացությունը համապատասխանեցնել բացատրությանը.

(1 միավոր)

1. Նորակառույց կամ վերանորոգված եկեղեցին բացելու օժման հանդիսավոր արարողություն
2. Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոներին նախորդող օրվա երեկոյան կատարվող եկեղեցական արարողություն
3. Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն
4. Եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է հաղորդության խորհուրդը
5. Եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջություն

- ա) Ժամերգություն
- բ) Անդաստան
- գ) Ծես
- դ) Նավակատիք
- ե) Ճրագալույցի պատարագ
- զ) Պատարագ

1	
2	
3	
4	
5	

*Ժամանակագրական հաջորդականության իմացությունն պահանջող առաջադրանքներ՝
յուրաքանչյուրը 5 փաստից*

15. Տոների անվանումները դասավորել ըստ տարվա ընթացքում դրանք տոնելու ժամանակագրական հաջորդականության: *(1 միավոր)*

- ա) Խաչվերաց
- բ) Բուն Բարեկենդան
- գ) Սուրբ Վարդանանց տոն
- դ) Վարագա խաչի տոն
- ե) Ծաղկազարդ
- զ) Սուրբ Ղևոնդյանց տոն

1	
2	
3	
4	
5	
6	

16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

- ա) Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցու կառուցումը
- բ) Գանձասարի կաթողիկոսության վերացումը
- գ) Հովսեփ արքեպիսկոպոս Արղության-Երկայնաբազուկի ընտրվելը Հայոց կաթողիկոս
- դ) Աղթամարի կաթողիկոսության վերացումը
- ե) Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ Էջմիածնի կաթողիկոսության իրավունքի վերականգնումը
- զ) Ղարաբաղի մետրոպոլիտության վերացումը

1	
2	
3	
4	
5	
6	

№ 17

Աշխատանք սկզբնադրյուրով՝ կազմված 2 հարցից

17. «...Սուավիա խալիֆը «Արևելքի իշխանին» հանձնեց բոլոր արաբական հողերի կառավարումը մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան և մանավանդ հոն-խազարների հետ բարեկամական հարաբերությունների մշակումն ու պահպանումը»:

1) Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: *(1 միավոր)*

2) Ու՞մ մասին է խոսքը: *(1 միավոր)*

№ 18-19

Տեքստի հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Խաչիկ Ա. Արշարունեցի կաթողիկոսի հրավերով Արգինա եկած Տրդատ ճարտարապետն այստեղ կառուցում է Ս. Կաթողիկե եկեղեցին:
- 2) Աշոտ Երկաթ Բագրատունի արքան իր նստավայր Բագարանում կառուցում է Ս. Առաքելոց եկեղեցին:
- 3) Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի համաձայնությամբ և Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի նախաձեռնությամբ 1081 թ. Վկայասերի քրոջ որդի Խաչիկ Անեցին օծվում է աթոռակից կաթողիկոս:
- 4) Ս. Ներսես Շնորհալուն հաջորդած Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսը 1178 թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը:

5) Բագրատունյաց թագավորությունը հայտնվել էր ծանր կացության մեջ, ուստի Հովհաննես Ե. Դրասխանակերտցի կաթողիկոսը հարկադրված էր կաթողիկոսական աթոռը տեղափոխել Աղթամար:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսը Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսին չեն վերաբերում. (1 X 2 = 2 միավոր)

- 1) 1844 թ. Կ. Պոլսի նորընտիր Մատթեոս պատրիարքը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետ Ներսես Աշտարակեցու անունը:
- 2) Նիկոլայ I կայսեր հրավերով Ս. Պետերբուրգ մեկնած Ներսես Ե. Աշտարակեցին շքեղ ընդունելության է արժանանում և ցարի կողմից պարգևատրվում ռուսական Բարձրագույն շքանշանով:
- 3) Ներսես Ե. Աշտարակեցու ջանքերով վերաբացվում են եկեղեցական ծխական ուսումնարանները, որոնք շուտով դառնում են աճող սերնդի ազգային դաստիարակության և հայեցի կրթության կարևոր կենտրոններ:
- 4) Կովկասի կառավարչապետ Գ. Ռոզենը եկեղեցական կանոնադրության նախագծի մի քանի հոդվածների վերաբերյալ Ներսես Ե. Աշտարակեցու հետ խորհրդակցելուց և ճշտումներ ու ուղղումներ անելուց հետո այն հետ է ուղարկում Ս. Պետերբուրգ:
- 5) Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի օրոք վերաբացվում են Սկյուտարի ճեմարանը, հիմնադրվում նոր դպրոցներ, հաստատվում Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը, սահմանվում ծխական ու թեմական դպրոցների ծրագրերն ու կանոնագրերը:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և գնահատել Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) ազգանպաստ գործունեությունը 1872 - 1892 թթ.: